

80 հ  
761

# ՄԱՍԻՍ

## Շ Ա Ր Ա Թ Ա Թ Ե Ր Թ

Ազգային, Գրական, Քաղաքական, Գիտական,

55<sup>րդ</sup> ՏԱՐԻ, Է. ՇՐՋԱՆ

Թի 14

27 ՄԱՅԻՍ 1906

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Գրական վարկեաններ . . . . .	Ռ. ՍԱՄԻԿԵԱՆ
Լուսփին (Քանասեղծութին Այպեռ Սամեհի) . . . . .	ՀՐ. Տ. ՆԱԶԱՐԵԱՆ
Ուղղումներ . . . . .	ԳՐ. ՄԱԼԽԱՍ
Բժշկական Քրոնիկ . . . . .	ՏՈՔԹ. Տ. ԱԼԼԱՀՎԵՐՅԻ ՈՐԴԻ
Ներու մաներ . . . . .	ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
Հաւաստի մեմուաններ (Քանասեղծութին) . . . . .	Յ. ՃՕԼՕԼԵԱՆ
Արկուսթուրփունք (Նմոյս մք անգլ. humourի) . . . . .	ՃԻՐՕՄ ՃԻՐՕՄ

Պ Ր Ա Ն Ս Ա Յ Է Ն Գ Է Պ Ի Պ Ր Ա Ջ Ի Լ Ի Ա

(ՏՕՔԹ. ԼԷՈՐՈԼ ՔՍԲԼԱՆԻ ՅԻՇԱՏԱԿՆԵՐԸ)

### Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

ՄԱՍԻՍ Շաբաթաբերքի սարեկան բաժանորդագրին է Կ. Պոլսոյ համար ԲԱՆՍՈՆ ԳՐԵ. եւ գաւառներուն համար յիսուն դրո., կանխիկ վճարելի: Արտասահման՝ 12 Թրանկ կամ 5 րուպի: Թղթասարական ծախքը Խմբագրութեան վրայ է: Վեցամսեայ բաժանորդագրութին չընդունուիր: Բաժանորդագրութիւնները կը սկսին ամեն ամսոյ մեկին: ՄԱՍԻՍ նրապարակ կ'ելլէ ամեն շաբաթ անսու:

Չի հրատարակուած ձեռագիրները եւ չեն դարձուիր:

ՄԱՍԻՍԻ մէջ կ'ընդունուին նաեւ ծանուցումներ, դիւրամասչելի պայմաններով:

Ձեռքէ կը ԾԱԽՈՒԻ ՀԱՏԸ ՔԱՌՍՈՒՆ ՓԱՐԱՅԻ

Հասցէ

در علیاده غلطه ده (ماسيس) غنیهی اداره سی

Թ Մ Բ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Մ Ա Ս Ի Ս Ի

Կ. Պոլիս, Ղալաթիա

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople

# RESOLUTIONS

1871

Resolved, That the following Resolutions be adopted:

1. That the sum of \$1000 be appropriated for the purchase of land for a school site.

2. That the sum of \$500 be appropriated for the purchase of a school building.

3. That the sum of \$200 be appropriated for the purchase of a school desk.

4. That the sum of \$100 be appropriated for the purchase of a school chair.

5. That the sum of \$50 be appropriated for the purchase of a school table.

6. That the sum of \$25 be appropriated for the purchase of a school bench.

7. That the sum of \$125 be appropriated for the purchase of a school stove.

8. That the sum of \$625 be appropriated for the purchase of a school desk.

9. That the sum of \$312.50 be appropriated for the purchase of a school chair.

10. That the sum of \$156.25 be appropriated for the purchase of a school table.

11. That the sum of \$78.125 be appropriated for the purchase of a school bench.

12. That the sum of \$390.625 be appropriated for the purchase of a school stove.

13. That the sum of \$1953.125 be appropriated for the purchase of a school desk.

14.

15. That the sum of \$525 be appropriated for the purchase of a school chair.

16. That the sum of \$262.50 be appropriated for the purchase of a school table.

17. That the sum of \$131.25 be appropriated for the purchase of a school bench.

18. That the sum of \$656.25 be appropriated for the purchase of a school stove.

# Ծաղկաբուսական

Թէլը, որ այսօր գրեթէ բոլոր ժողովրդաց գլխուսը ըմպելին դարձած է, մինչքան բազմաթիւ տեսակներ ունի որ, որդարեւ գործածողներուն համար բուսական դժուար է լու ընտրութիւն մը ընել: Այդ տեսակներէն սմանք նշանաւոր են իր ախորժակով եւ քաղցրաբոյր, սմանք ալ թէւ նոյնքան ախորժակի համ ու համ լուսին, գերազանց են սակայն իր կազմութիւնը եւ զօրացուցիչ. վերջուպէս իւրաքանչիւր թէյ իր ուրոյն յատկութիւններն ունի որոնք զինքը կը զանազանեն ուրիշ տեսակներէ:



Սակայն կայ թէյ մը, որ այդ յատկութեանց մէկէն կարեւորները կը միացնէ իր վրայ, այսինքն՝ գոյն, համ, համ եւ մանուշակ կազմութիւնը եւ զօրացուցիչ անշուքական ազդեցութիւն մը, եւ այդ թէյն է ճաբոնցի թէյը, որ այդ յատկու-

թեանց շնորհիւ կը յարմարի մէկն աւորիքի ու կազմութեան, մէկն կլիմայի եւ եղանակի եւ մէկն ճաշակի:

Յալբուսեան եւ Իսազուլեան թէյի մեծ վտանգաւորները, իր բազմաթիւ յանախորդայ ծառայութիւն մը մասնացանկու համար, այս անգամ մեծաքանակ ներածած է հարսնական զուտ թէյ մասնաւոր եւ քեզեցիկ աւտոբիոսը ու կը հրաւիրէ օգտուել այս աւտոբիոսը բոլոր անոնք, որ կը փոփոքին ունենալ թէյ մը

Համով, հոսով, առողջապահիկ եւ կազմութիւն:

Սոյն վաճառատան մէջ կան նաեւ հնդկական, չինական, Սէլլան եւ ճապոնի մանուշակ թէյեր:

Ռուսագրութիւն մարգարի 4-10

## ՏՈՔԹ. Բ. ԷՄԻՐՁԷ

Հանրածանօթ մանուկաբուս եւ կնախօտարան (gynécologue), Տօքթօր Էմիրզէ որ 15 տարեան գործունէութեամբը մեծ համբաւ ստացած է, կը ծանուցանէ յարգայ յանախորդներուն թէ բնական փոխադրած է Պէքեար փողոց թիւ 18 Բաց ի վերայիցեալ իւր մասնագիտութենէ կը բուժէ նաեւ նորագոյն մէթոսներով ջղային եւ հագեկան ու երեւակայական մէկն տեսակ հիւանդութիւնները, ինչպէս նէօրոսթէնի եւ tic անուանուած ուղիքերեօի եւ ուտերու ագեղ եւ ակամայ շարժումները եւ դաշտանի դադարումէ յառաջ եկած ջղային խռովումները եւ Երիտասարդական մօլիքները, ինչպէս նաեւ գինեմօլիքը, մօրիֆնամօլիքը եւ այլն: Կիրակիներէն զտա մէկն որ կէսօրէն սկսեալ մինչեւ երեք ժամ հիւանդ կընդունի, եւ արբաթ օրերը ճրիարար կը դարձանէ վկայեալ աղքատները: 4-10

**Տ Ա Ն Ե Ր Ա Ն Ո Ւ Թ Ի Գ Ի Ն Ը**

դաւակներուն աչաց պայծառութիւնով կը կայանայ, երբ անոնց ուրբ կը գունատի, մոտոմունքի և նեղութեան պատճառ կը ըլլայ: Եթէ այսպէս տկարացած տղու մը



**SCOTT'S EMULSION**

տրուի՝ առողջութիւնը շուտ մը կը վերադառնայ և մտածմունքը կը դարձի: Վասնզի Ըսգոթի Բաղադրութիւնը հիւանդութեանց դէմ կը դնէ, և զտղայքը զօրաւոր մեծնալու կ'օգտէ և անոնց աչքերը փայլուն և զուարթ կը պահէ, միշտ

**Ը Ս Գ Օ Թ Ի Բ Ե Ղ Ե Գ Ի Ր Ո Ւ Թ Ի Ո Ւ Ն**

պահելու է: Ասիկայ զԶեղ և Չեր դաւակները գիշեր ու ցորեկ ցաւերէ և յունահատութիւններէ կը փրկէ: Ուշադիր պէտք է ըլլալ որ շեշը վրան այս նշանով վարդադոյն փաթեթի մէջ է — եթէ կ'առնէք


**Ը Ս Գ Օ Թ Ի Բ Ե Ղ Ե Գ Ի Ր Ո Ւ Թ Ի Ո Ւ Ն**

փոշկութիւն առած կ'ըլլաք: Բարե բեղտործները և բեղումները իւր ծախէն:

Շիշերու փայլ աւոր ուշադրութիւն ընել պէտք է:  
22

**PHOENIX ASSURANCE Ld. Co.**

**“Ֆ Ի Ն Ի Ք Ս”**



ՀԻՄՆԵԱԼ Ի ԼՈՆԵՈՆ 1782 ԻՆ  
ՆԸ ԳՈՐԾԻ Ի ԳՈՒԼԻՍ 1869ԻՆ Ի ՎԵՐ  
ՈՆԳԼ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ.  
Դրամագլուխ և պահեստի դրամ  
Անգլ. ոսկի 4,218,000

Ֆինիքս սոսկ հրդեհի դէմ Ապահու-  
մագրան Ընկերութիւն մըն է, ծանօթ  
իւր պատուաւորութեամբ և շնորհակալ  
իւր անմիջական վճարումներով:  
Ֆինիքս կ'ապահովագրէ հրդեհի և  
կայծակի դէմ սմէն առտակ անշարժ և  
շարժուն ստացւածք, յսլժ նպատակայ  
պայմաններով:

Ընկերութեան նշանաբանն եղած է.  
ՈՒՂՂԱՄՏՈՒԹԻՒՆ և ԱՆՄԻՋԱԿԱՆ  
ՀԱՏՈՒՑՈՒՄՆ ՎՆԱՍՈՒՑ. Ցա՛րդ վե-  
տած է առուել քան 27,000000 անգլ.  
սոսկի:  
Ընդհ. գործակալ Գլխայ և գաւա-  
ւաթ: Գ. ՎԱՐԴԱՆԵԱՆ  
Վիքայիս խան, Պանք Օրօմանի մօտ  
Ղայաքիս:  
Փոխ գործակալ Ի Գլխ  
ՃԻՎԱՆ ԹԵՔԷՆԱՆ  
4 10 Ֆնագլխան խան

**Ա Տ Ա Մ Ն Ա Ր Ո Յ Ժ**  
**Գ. Գ Ա Ր Ր Ի Է Լ Ե Ա Ն**  
ՌԵՐԱ, ՄԵԾ ՓՈՂՈՑ ԹԻՒ 200  
Կայաթա-Սէրայի Լիսէին դէմ  
Գե. Սե. Նբ. օրերը առաւօտեան կանու-  
խան մինչև իրիկուան ժ. 11½  
Բե. Գե. Ուր. օրերը ճեմ մինչև 11½  
Կիրակի օրերը ժամադրութեամբ 4-10

# ՄԱՍԻՆ

## ԳՐԱԿԱՆ ՎԱՅՐԿԵԱՆՆԵՐ

### ԸՆԹԵՐՑՈՂԸ ԿԸԶԲՕՍՆՈՒ...

... «La parole a été donnée à l'homme pour déguiser sa pensée»: Փիլիսոփային այս խօսքը, իր գեղեցիկ ու միանգամայն հեղինող ձեւին մէջ, կը կարծեմ թէ, ոչ մէկ ատեն այնքան աղէկ պիտի պատշաճէր որքան հիմա, մեր Գրականութեան անուկով գրիչ շարժող այն կարգ մը մարդոց որոնք հետզհետէ կը ստուարանան թուով և ամբողջ դասակարգ մը կազմել կը սպառնան հայ հասարակութեան գլխուն: Թարգմանենք—«Մօսքը տրուած է մարդուն, որպէս զի անով իր միտքը կեղծէ»: Այս միջոցիս մանաւանդ, մեր բոլոր թերթերուն մէջ հաւասարապէս, կը հանդիպինք անոնցմէ մէկ քանիններուն որոնք միմիայն խօսելու, տրտնջալու, անպատճառ բան մը ըսած ըլլալու ծարաւը ունին իրարու հանդէպ, քան թէ իրենց միտքը, իրենց գաղափարները, իրենց ճաշակները վեհանձնօրէն, անկեղծօրէն ի հանդէս բերելու, ճանչցնելու փափաքը: Բառերու և բացատրութիւններու առատ մթերքի մը մէջ, անոնք կը ձուլին, կը կերպարանափոխեն ինչ որ միտքը, վարքացած մարդու միտքը, ըստ ինքեան, պիտի ներշնչէր իրենց, այսինքն ազնիւ դատողութիւններ և լուրջ նկատումներ, խնդրոյ տակ եղող հարցման մը արդար լուծումին ի նպատակ կեղծիքը որ կայ սակայն մարդկային հոգւոյն մէջ, կը թուի մէկ քանի բարենիշ ևս վաստակած ըլլալ Մարդկութենէն և խօսք որ կարող է այդ կեղծիքը ոսկեղծել և ակնախաբիղ գոյներու տակ պատկերացնել զայն, կը նմանի հիմա անարժէք այն առարկային որուն ամէն ոք կրնայ մօտենալ

և տիրանալ դիւրութեամբ: Մօսքը réc-lameօն է միտքին և գիտենք թէ քսաներորդ դարուն մէջ ինչ կ'արժեն ուեկամները: Ըսել է, կրնանք ճակատաբաց եզրակացնել, թէ անիկա որ գիտէ խօսելու և ճարտարօրէն խօսելու կերպը, շատ անգամ ուեկամ ըրած կըլլայ իր միտքին որ մեծ բան մը չ'արժէր յաճախ: Գէթ, ինչպէս ըսի, մէկ քանի գրողներ այսօր նոյն ճամբուն կը հետեւին յաջողելու յոյսով և կը գրեն, կը խօսին, կը պօռան թերթերու մէջ, իրենց բուն զգացումները, իրենց ճշմարիտ մտածումները կեղծելով: Եւ այս հոսանքը, իր խօլ ընթացքին մէջ, հրապուրած ըլլալ կը թուի նաև լաւագոյններէն մէկ քանին: Թմրկահար խեղճուկ գրողին քով ինչպէս կուզէք որ վայլեցնեմ թաւջութակի վարպետը: Ինչ ծիծաղ, Աստուած իմ: Կրջախոհ գրողներն ալ պէտքը կը փնտռեն արդեօք կեղծելու իրենց հոգին, իրենց միտքը: Ապաքէն, այս վհատեցուցիչ և անարդարանալի վիճակն է զոր Պոլսահայ Գրականութիւնը կը ներկայացնէ այսօրուան օրս, անորոշ վերջաւորութեան մը տխուր ստուերը պատցնելով մեր աչքերուն առջև: Թարմ օրինակներ կան մէջտեղ կեղծիքի, առատ և անիմաստ խօսքերու: Ահա՛ Մոսաճայնը, տիրացուական խնդիրը նախ, մեր տիրացուական հորիզոնին: Մինչև հիմա տակաւին կը խօսին անոր վրայ հրապարակաւ և սակայն կը վճռուի թէ Մոսաճայնը միակ պատշաճ եւ օրինաւոր եղանակն է եկեղեցական արարողութեանց արդի ձեւին: Ինչո՞ւ հապա կը վիճարանին, գիրար

կ'անուանարկեն, իրարու չ'հաւնելու կը ձգնին: Որո՞նք են այս մարդիկը, ինչո՞ւ իրենց զգացածը, գիտցածը չեն գրեր գոնէ և Գոնսէրվաթուռուէ մը ելածի խաբկանքը կուտան ինքզինքնուն և ուրիշներուն, օ՛հ, տիրացուները: Գրական խնդիր մը հիմա. Գր. Մալխաս կօնգուռ կը թարգմանէ և տակաւին ոչ ոք զբաղած անով ու խղճմտօրէն զայն ուսումնասիրած եւ անա՛ խօսքերը հրապարակ կ'ելլեն, պար կը բռնեն ամէնուն առջեւ: Չարանախանձ եւ հակառակորդ ոգի մը կայ գրողներու միտքին մէջ եւ իրենց գործածած մելանը լեզի կը հոտի: Մարդուկին մէկը պառաւական շեշտով մը «Նրանի՛ թէ այս գիրքը չի հրատարակուէր ընաւ» կը պօռայ, իբր թէ Մալխասէն զատ ուրիշ մը ծախսած ըլլար դրամ: Ուրիշներ կան դեռ որ թարգմանչին ֆրանսագիտութիւնը կասկածի տակ կը ձգեն, միամիտները, երբ անիկա կարող է, ամբողջ երկու ժամ, ֆրանսերէն լեզուով, յանպատրաստից, Իւնիօնի սրահին--մէջ եթէ կուզեն,— գրական dissertation մը ընել իրենց ներկայութեանը: Եթէ ներկորդ անգամ «Հէրման և Տորթէա»ի ներհուն թարգմանիչը լրջօրէն ձեռք չ'առնէր խնդիրը, իր գեղեցկագիտական հայեացքները չի պարզէր եւ եթէ միւս կողմէ Գր. Մալխաս չի յայտնէր նոյնպէս իր նկատումները, իր պատճառաբանութիւնները, իր հասկացողութիւնը, ապահովապէս խօսքեր պիտի շարունակէին արտայայտուիլ եւ այս երկու լուրջ միտքերու հանդիպումէն չպիտի յառաջ գար այն փոքրիկ լոյսը որուն փայլելուն կրօպասենք դեռ: Եթէ մտածումները հրատարակուէին նախապէս իրենց բառական իմաստին մէջ, եթէ կեղծիքը չի գար իր ռեկլամը ընելու խօսքերու տարափով մը, ընականաբար գրական այս վէճը սովորականէն աւելի պիտի ունենար արժէք ընթերցողներու աչքին: Ասդին, երբ Տիկին Չապէլ Եսայեան կը դատաւիտուի հիմա այնքան անզըթութեամբ, կրնա՞նք վճռել թէ քննադատողին հարազատ մտածումն է զայն այսպէս ընող. դարձեալ խօսքեր չեն որ կուզեն երեւնալ

պաճուճազարդ մանկաւիկներու պէս եւ խնդիրը ցուցնել այնպէս ինչպէս որ չի երբեք իր ինքնութեան մէջ: Որովհետեւ «Միամիտի մը արկածները»ին երիտասարդ հեղինակը ուզեց գրական գեղոցիկ լեզուով ողջերթ մը մաղթել հրապարակաւ այդ կնոջ, պէտք կա՞ր որ այն ատեն միայն ուրիշներ մէջ նետուէին եւ զայն բանազող հուշակելու չափ առաջ երթային, անստոյգ եւ տկար հիմերու վրայ դրուած եզրակացութիւններով: Մտածումը գործ ո՞ւնի հոս արդեօք եւ չենք կարող ըսել թէ անիկա կեղծուած է պահ մը եւ առատ խօսքերու տեղի տուած լոյ: Չ'մոռնանք թաւշանձեանի խնդիրը: Անիկա, մէկ կողմ դրած իր հարստութիւնը, իր արժանապատուութիւնը, իր դիրքը, կուղայ Պոլսոյ գրողներուն հետ զբաղիլ: Ամերիկեան ճէնդլմէնութիւն մը չէ՞ ասիկա իրօք, անկեղծ մտածումի, սիրոյ արդիւնք չէ՞ միթէ: Ո՞ր է ուէքլամը բոլոր ատոնց մէջ: Երբ տակաւին կերակուրի սեղան նստիլ չգիտայող հարուստը, հոս, միայն հարիւր ոսկիի ճղճիմ գումարի մը փոխարէն իր անուան ոսկեղօծ արձանագրութիւնը կը պահանջէ եկեղեցիին մեծ դրան ճակատը, ինչո՞ւ մեր աչքին չերեւնայ, չի նկատուի կատարեալ եւ գոհիկ parvenu մը — որովհետեւ քայտ parvenuներ ալ կան—եւ այս ամականը արուի անո՛ր որ գաղափարի, անձնուիրութեան ու բարեացակամութեան ցոյցեր կընէ մեղի: Խօսքերը չեն դարձեալ որ այս խնդրոյն շուրջը իրենց հրախաղութիւնը կատարեցին, երգիծական գեղահմայ fuséeներ եւ յաջող pétardներ ալ արձակել տալով պահ մը մեր առջեւ: Չի՞ չենք երկու դասախօսներու այն բուն պայքարը, Գեղեցիին, Բարեոյն եւ ճշմարտին ծառայող սօճ սրին մէջ իսկ որ վերջապէս ըմբշական ձեռքերու մը յանգեցաւ եւ նիւթ հայթայիեց խօսքերու որոնց մէջ սակայն բուն եղրակացութիւնը, նպատակը կը պակսէր. վճիռ գոյութիւն չունէր այդ խօսքերուն մէջ, մտածումը կեղծուած էր դարձեալ եւ ոչ ոք կը ջանար արդար դատողութեան մը ենթարկել եղած միջադէպը, —

ինքնին աննշան եւ մամուլի չըջանակէն դուրս մնալու դատապարտուած միջադէպ մը արդէն :

Այս օրինակները , այս եղելութիւնները զորս մէջ բերի համառօտ կերպով , շատ նոր են տակաւին եւ անոնք տեղի կ'ունենան դժբաղդարար անանկ գրողներու միջեւ որոնք մէկմէկէ աւելի կ'արժեն եւ իրենց վայելած հմտութիւնով կամ հրապարակային դիրքով հակոտնեայ են իրարու : Բայց չենք կրնար ուրանալ որ առիէ առաջ ալ նոյն բարքերը պատահած չըլլէ բոլորովին տարբեր գրողներու միջեւ : Pro-cédés նոյնն է , եթէ միջադէպերը տարբեր ձեւի տակ առաջ եկած ըլլան իսկ : Չեմ յիշեր հետեւած ըլլալ լրագրական վէճի մը ուր ոչ կամ կանուխ մուտ գտած չըլլան երկու հակառակորդներէն մէկուն կամ միւսին անձնական հաշիւները , կարգ մը կեղծիքները եւ որ յանգած չըլլայ վերջապէս ընդհանուր քրքիչի մը , ընդհանուր յուսախաբութեան մը : Ասանկով է որ Բննադատութիւնն ալ , զոր կարգ մը լրջախօս անձեր չեն վարանիր հիմա Ստորնաքարչութիւն դաւանելու իրաւամբ , բոլորովին կորսնցուց իր արժէքը , իր վարկը , իր իմաստը , երբ անիկա է'ն կարեւոր և մեծ դերը կատարելու կոչուած է այլուր , ո'չ միայն գրական ասպարէզի , այլ գեղարուեստի բոլոր ձեւերուն արգասաւորման , բարձրացման և ազնուացման հաւասարապէս : Ուսկի'ր է ուրեմն այս վարկարեկ վիճակը քննադատութեան , որն է զայն այս ստոր ձեւին հասցնող պատճառը : Մհ , ինչո՞ւ չըսենք անմիջապէս թէ մտքի այն ընդհանուր վիճակն է որ աւելի , խօսքերով , լեզուական դարձուածքներու յոռի միջոցներով կը կեղծուի , կը նենգուի , լրագրական հրապարակի վրայ , փոխանակ անկեղծ մտածումներու , յատակ և ուղիղ դատողութիւններու մէջ ձուլուելու , արտայայտելու : Եւ գրելու այս ձեւը , մոլութիւն մը եղած է պարզապէս շատերուն համար : Գրադատութիւն մը , ընկերական խնդիր մը , լրագրական վէճ մը , գրական պայքար մը , անխտիր , նոյն կեղծիքով , նոյն տգեղ

ձեւերով հրապարակ կը նետուին , կը ձեծուին և կը լուծուին , այնպէս որ գրեթէ միշտ յաղթողը կը շփոթուի յաղթուողին հետ և վճիռը կ'արձակուի ի վնաս սա մեր խեղճ գրականութեան :

Որովհետեւ—ա'լ տեղն է որ շեշտենք բուն կէտը , առանց վարանումի—որովհետեւ թո՛ղ երբեք չի կարծուի թէ ընթերցողը որ բոլոր այս տարօրինակութիւններուն հանդիսատես կըլլայ , գո՛հ է այժմ և համ կ'առնէ իրեն տրուածներէն : Անիկա միակ տարրն է որ էր այլազան խաւերով մէկտեղուած , միշտ աննպաստ վճիռ մը պիտի արձակէ լրագրական վէճի մը խառնուող դէմքերուն , առանց այդ վէճին պարզած կարգ մը շահեկան երեւոյթներէն ազդուելու , հրապուրուելու : Հայ ընթերցողը bon enfant է թէև , բայց անգուժ է յաճախ , անտարբեր է միանգամայն և կը կարդայ միայն իր անձնական հաճոյքին , ժամանցին համար : Լրագրական պայքարի մը ատեն անիկա , անմիջապէս , առանց վճռելու , ծիծաղելի անկողմնակալութեամբ մը , գովելու կելլայ այն որ աղօլուօ կը գրէ , այսինքն այն որ զօլլու կը գրէ և զօլլու գրելով կը հայոյէ , կը գռնհիկնայ , վնաս չունի : Հերիք է որ աղէկ զարնէ , թօ՛սափ գրէ , խերը անիժէ դէմինին , մէկ խօսքով , իբր թէ այսօրինակ վէճեր յատկապէս սարքուած ըլլային լրագրապետներու դրդումով , ընթերցողին էհի՛մն համար սոսկ : Ի՛նչ անկում միտքերու աշխարհին մէջ . մէկ երկու հրապարակագիրներ գիտե՞մ որոնք այս ձեւով սկսած են վիճարանիլ իբր թէ ընթերցողին գոհունակութիւն մը պատճառելու մտօք . լրագրապետներ ալ չի'կան այժմ , որոնք գրական վէճեր կ'արժարձեն , կը հիւրընկալեն զանոնք , աւելի թերթ քելու տրամադրութեամբ : Բայց ընթերցողը կը շարունակէ կարդալ և զբօսնուլ , Լա Ռօշ-ֆուգօ տեղ մը ըսած է . — «Կը նախընտրեմ նուրբ կիսակոչիկի մը հարուածը գլխուս քան թէ կոշտ մոյկի մը հպումը ձեռքիս» : Այսինքն գրական վէճի մը մէջ միշտ նախընտրելի են թեթև հարուածները՝ ծանր հարուածներէն : Այս նրբութիւնները սակայն մեր

կասարակութեան համար չեն, անիկա շատ աւելի կ'ախորժի մոյկի հարուածներէն և յաճախ կը ծափահարէ զանոնք որ այդ ծանր հարուածները կուտան ուրիշներու գլխուն, տեսակ մը մոլեգնութեամբ, ամբարտաւանութեամբ և զուհիկ համարձակութեամբ:

Եւ ո՞վ է տուժողը բոլոր այս մնոտի պայքարներուն մէջ: Երբ ընթերցողը այսքան անտարբեր է, յաճախ տգէտ և երբեմն միամիտ, կ'արժէ՞ արդեօք—կը հարցնեմ—որ գրականութիւնը բարոյապէս բարձրացնելու հակամէտ, իրենց տաղանդին շնորհներովը զայն բեղմնաւորելու հետամուտ միտքեր, երբեմն երբեմն, պարզ հակառակութեան ոգիէ մը մղուած, զիրար վարկաբեկելու ջանքեր ընեն հրապարակաւ, զիրար անուանարկեն, իրարու արժանիք ուրանան, միմիայն խօսքերով, կեղծիքով, առանց դատադութեան, առանց յարգանքի:

Գրական պայքարները այսքան անարդարօրէն մղող անձերը չեն նմանիր—ներեցէք բացատրութեանս—թաղին սրճարանին առջև կաքաւոզ միամիտ աքաղաղներուն որոնք զիրար բզքտելու, կուրցնելու մոլեռանդութիւնը ունին կուրծքերնուն տակ:

Եւ այսպէս կուռուղները, դիմացինին վարկը ոչնչացնելէ աւելի, նոյնիսկ իրենց վարկը կոտորած կըլլան, համբաւնին վրայ կուտան, արժանիքնին կը նսեմացնեն և իրենց երեսէն Գրականութիւնն ալ, բարձրանալու ազնուանալու տեղ, կիսնայ, կ'աղտոտի:

Եւ ինչ որ սոսկալի է դեռ, ընթերցողը կը զբօսանու... .

Ռ. ՍԱՄԻԿԵԱՆ

ԵԴԻՊՏՈՍԷՆ հաղորդուած լուրերու նախելով, զորս հրատարակեցին օրաթերթերը, Պօղոս փաշա Նուպար մայիս 19ին Գափրէէ Աղեքսանդրիա իջնելով, եկեղեցւոյ ինամակալութեան նախորդ անդամներէն Բէիզեան պէյի հետ տեսակցեց և յետոյ այցելելով իր հանգուցեալ հօր գերեզմանին ու աղօթելով, յաջորդ օրը մեկնեց է Եւրոպա, ամառնային օդափոխութեան համար մէկ քանի ամիս միալու: Եգիպտոսի առաջնորդ Տ. Մկրտիչ,

վարդապետ, Ազգ. Պատրիարքարանի հեռագրական հրահանգին համաձայն, թէպէտ Պօղոս փաշայի դիմելով խնդրեր է որ Թաղ. Սորնուրդի ընտրութեան հսկէ, բայց Ն. Վսեմութիւնը չէ ընդուներ՝ առարկելով թէ ինք Եւրոպա պիտի ուղեւորի և թէ Արքանաժ Բարթող փաշա, իբրև նախկին ատենապետ և կարող անձնաւորութիւն, կրնայ այդ գործը ստանձնել, ընտրական գործողութեանց հսկելով և օրինաւոր Թաղ. Սորնուրդի մը ընտրութիւնը կատարել տալով:

### ՈՒՂՂՈՒՄՆԵՐ

ԲԵՐՍ, 26 Մայիս 1906

Խմբագրութիւն Մասիսի .

Կուզեմ որ ձանձրութիւն չառնէք հրապարակաւ յայտնելու թէ ԴՆԴԵՄ գրած եմ ձեռագրիս մէջ՝ յիշատակելով Բագրատունւոյ մէկ տողը: Աստի տպագրական սխալ չէ: Բագրատունւոյ բնագիրը աչացն առջև չուներմ. յաճախ յիշողութեամբ իրմէ օրինակ կը բերեմ: Բայց, նախ հայկաբանները համաձայնին մեր բառերուն եւ բառգրքին վրայ եւ մնացածը մեզի թողուն, մենք պէտք չունինք իրենցմէ սուղելու գրելու արուեստը: «Առձեռն Բառգրքին» համար, հաւասար են ԴՆԴԻԻՆ կամ ԹՆԴԻԻՆ: Նոյն բառգիրքը գրելէ վերջ լ՛ղեմ. քնդիմ, քնդիւն, քնդում, յանկարծ կը փոխէ քնրոցի: Պէտք է գրել քնրանօ՞ր թէ քնդանօր: Արդէն ամէնուն գիտցած բանն է թէ քի և դի, չի եւ զի շփութութիւնները սովորական են, նոյն իսկ ամենալաւ բառգիրքներու մէջ, ինչպէս «տենչամօ» եւ «տենջամ» եւլն.:

Այս առթիւ, սրբագրելի կը յայտարարեմ Մասիսի 13երորդ թիւին, 201երորդ էջին վերջին բառը որ է՝ «իրենք» փոխանակ «իրենց»ի: Էջ 202, սիւնակ Ա, «գուրդ» է կշռութենէ, դաշնականութենէ, կարդա՛ղաճաւորութենէ: Նոյն թիւին մէջ «Անցնինք ջրհեղիզը» չեղած է Ռասինի բուն բնագրէն (Les Plaidours). ճշդագոյնն է «Անցնինք ջրհեղելին»:

ԳՐ. ՄԱԼԵՍՍ

## ԱԼՊԵՌ ՍԱՄԵՆ

### ԼՈՒԹԻՆՆ

Լուսթիւնն մեր մէջ կիջնէ անսաման .

Աւելի քաղցր են այերդ կիտափակ .

Հոգիս հանգչեցուր ծունկերուդ վրան :

Տարածուած աղւոր , լայն մազերուդ տակ .

Լաթերուդ իջած քողին ներքեւէն ,

Ուս մը դուրս ցայտէ մերկ ու սպիտակ :

Խօսքն ունի ոսկի խաղեր աննրման ,

Սակայն լուսթիւնն աւելի քաղցր է ,

Երբ սրտերն մինչև բերան կը լենան :

Սիրոյ գիշերներ կան նուրբ , հեշտագին ,

Անո՛յ գիշերներ՝ ուր մարդ կը խորհի

Թէ հազիւ թելով մը կապուի հոգին :

Ու ոգեվարքի պահեր կան արտում ,

Յորում օրհնեալ Մահը կ'երազէ մարդ ,

Գիրկընդխառնումի մը մէջ անհատնում :

Վարդերուն հոգին մեզ բոյրով կ'օծէ .

Քաղցրիկ լամբարն ալ կը հիւծի արտում :

Ժամանակն իր փոքր սալը կը ձեծէ :

Օ՛հ , մեկնի՛լ ասկից ու մեկնի՛լ անդարձ . . .

Օ՛հ , մեկնի՛լ ասկից , մեկնի՛լ վաղատամ . . .

Զեռքերը սիրով լի՛ մեկնի՛լ յանկարծ :

Օ՛հ մեկնի՛լ անձիգ , ու անդորրաւէ՛տ ,

Սոսկ նուաղումի մը մէջ գերագոյն ,

Շիջի՛լ անգիտակ , լիջի՛լ առյաւէտ . . .

Ու ալ լուսթիւն , լուսթիւն յաւէտ . . .

Albert Samain

Թարգմ. ՇԲԱՆՏ Տ. ՆԱԶԱՐԵԱՆ

# ԵՐԿՈՒ ՄԱՆԵՐ

## ՅՈՎՀԱՆՆԷՍ ԷՖ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

Երկու պատուական ծերունիներու մահը արձանագրելու տխուր հարկին մէջ կը գրտնուինք :

Կ. Պոլսոյ Առեւտրական Սենեակի առաջին խորհրդական Սենեքերիմ էֆ. Մանուկեանի եղբայրը՝ Յովհաննէս էֆ. — որ հօրեղբայրն է Մանուկեան Բարսեղ, Տիգրան և Մկրտիչ էֆ.ներու, — մայիս 12ի գիշերը մահկանացուն կնքեր է Մարտիրոս մէջ : Հանգուցեալը 75 տարեկան էր և երկար ժամանակէ ի վեր հաստատուած Մարտիրա ուր վաճառականութեամբ կը զբաղէր և որուն հայ գաղութին ամէնէն հին ու պատուաբեր անդամներէն մէկն էր : Ամուսնացած էր՝ բայց անդաւակ, և իր մեծկակ հարստութենէն բաւական կարեւոր բաժին մը կտակած է կըսուի, ազգ. բարենպատակ հաստատութեանց : Կը հաւաստեն, ինչպէս օրաթերթերն ալ հաղորդեցին, թէ արդէն իսկ Ազգ.

Պատրիարքարանի մէջ կը գտնուի իր կտակը ուր ի մէջ այլոց տրամադրուած է որ Թուրքիոյ մէջ իր ունեցած կալուածներէն մէկը վաճառուելով արդիւնքը յատկացուի գետնի մը գնման, ի Մարտիրա, եթէ այնտեղ Հայոց եկեղեցի մը կառուցանելու ձեռնարկութիւն ըլլայ : Յուղարկաւորութիւնը կատարուեր է մայիս 14ի կիրակի օրը, մարմինն հանդիսաւոր թափօրով իր բնակարանէն փոխադրուելով Հայոց մատուռը և հոն եկեղեցական արարողութեանց կատարումէն ետք՝ Սէն — Բիէոի գերեզմանատան աւանդատունը, ուր պիտի մնայ մինչև որ հարկ եղած կարգադրութիւնները վերջանան, Կ. Պոլիս բերուելու և Մանուկեան գերդաստանի յատուկ դամբարանին մէջ ամփոփուելու համար : Այս փոխադրութիւնը կատարել տալու նպատակով Մարտիրա ուղեւորելու կը պատրաստուի հանգուցելոյն եղբորորդին՝ Աշլակ էֆ. Ս. Մանուկեան :

Յովհաննէս էֆ. ի մահը ցաւով իմացուեցաւ այստեղ բոլոր շինքը ճանչցողներէն և Մանուկեան գերդաստանի բարեկամներէն ու համակրողներէն որոնք փութացին իրենց վշտակցութիւնն յայտնել հանգուցելոյն մեծայարգ եղբոր՝ Սենեքերիմ էֆ. ի որ թէև հանրային կեանքէ ու առեւտրական գործունէութենէ մեկուսացած, իր յառաջացեալ տարիքին պատճառաւ, բայց միշտ սիրուած անուն մը մը ունի իբրև նախկին վարիչ մը Հիւանդանոցի Հոգաբարձութեան, երբեմն անդամ Բաղ. Ժողովին, և իր խոհականութեամբն ու արդիւնաւոր ժողովականութեամբը ընդհանուր յարգանքի ու զնահատման արժանացած : Յաւակցական արտայայտութիւններ եղան նաև Մանուկեան Եղբայր որոնք ոչ նուազ յարգանք ու համակրանք կը վայելէն թէ՛ առեւտրական ասպարէզին վրայ իրենց գրաւած պատուաւոր դիրքովը և թէ՛ ազգ. բարենպատակ հաստատութեանց օւղտին իրենց մատուցած անձնուէր ծառայութիւններովը :

\* \* \* \* \* Վերջին պահուն, հետեւեալը կը հաղորդուի Ազգ. Պատրիարքարանէ, իսկան ժողովոյ չորեքշաբթի օրուան նիստին որում մանց կարգին մէջ. — «Ս. Պատրիարքը Ժողովին հաղորդեց Մանուկեան Յովհաննէս էֆ. ի մահը և աւելցուց թէ հանգուցեալը կտակագիր մը ունի Պատրիարքարանի մէջ, որով զանազան նուիրատուութիւններ ըրած է այլեւայլ բարեգործական հաստատութեանց : Ժողովը որոշեց իր յառաջիկայ նիստին մէջ բանալ կտակագիրը և տեղեկանալ պարունակութեան : Այս առթիւ, Ազգ. կեդր. Վարչութեան բոլոր անդամոց ստիպողաբար հրաւիրագիր պիտի ուղղուի ներկայ գտնուելու համար նոյն նիստին» :

\* \* \* \* \* Հանգուցեալը իր կեանքի վերջին օրերուն մէջ փափագ յայտնած ըլլալով որ իր դագաղին ո՛չ պսակ և ո՛չ ծաղկեփունջ ղրկուի, Մարտիրաբնակ ծանօթ ազգայիններ՝ փոխան ծաղկեփունջի՝ զանազան նուիրատուութիւններ ըրած են տեղւոյն Մատրան, որոնց Կուսմարը կը հասնի 560 Փրի

### ՅԱԿՈԲ ԷՖ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

Այլապէս մեծարելի ու ծանօթ դէմք մըն էր Յակոբ Էֆ. Մատթէոսեան, համանուն Տպարանին ու կազմատան ալեզարդ հիմնադիրը, որ թոքատապի մը հետեւանքով իր մահկանացուն կնքեց երկուշարթի գիշեր: 72 տարեկան էր, ու զեռ մինչև վերջին ժամանակներս հաճոյք կըզգար զբաղելէ այդ երկու մեծ հաստատութեանց գործերովը, թէև վաղուց հետէ զանոնք ձեռնհասօրէն կը վարէ իր որդին՝ Վահան Էֆ. Մատթէոսեան: Յակոբ Էֆ. ի մահը դառն սպաւորութիւն մը առաջ բերաւ ոչ միայն մեր Բողոքական եղբարց մէջ, որոնց Ազգապետը եղած էր 1868էն 1888, և որոնց համար նահապետի մը դիրքը ունէր միշտ, այլ և մեր ազգ. ամէն շրջանակներուն մէջ ուր սիրելի էր: Բազմաբղիւն կեանքի մը յիշատակները կը թողու հանգուցեալը, թէ՛ իր հիմնած, ընդարձակած ու ձոխացուցած արհեստական երկու մեծ հաստատութիւններովը, որոնցմով կէս դարէ աւելի ժամանակ հաղորդակից եղաւ մեր մտաւորական կեանքին, և թէ՛ իր ներհուն մտքովը ու կրօնախն հրատարակութիւններովը: Խմբագրութիւնս մասնաւորապէս մտերիմ հաղորդակցութեան մէջ գտնուեցաւ Յակոբ Էֆ. ի հետայն չորս տարիներու միջոցին ուր Մասիսը կը սպաքուէր Մատթէոսեան սպարան. հոն մօտէն կը վայելէինք իր հայրական գուրգուրանքը, կը գնահատէինք իր գրասիրական զգացումները և ինքնօգնութեամբ յառաջացած անձնաւորութեան մը առողջ ու գործնական մտծումները: Իրրև ընկերային մարդ՝ անստգիւտ վարքի ու բարքի տէր էր, օրինակելի ամուսին եւ հայր: Իր զաւակները ժառանգած են մեծագոյն մասնիրենց հօր իմացական ու բարոյական բարեմասնութեանց, այնպէս որ, —ինչպէս շատ պատշաճօրէն կը շեշտէր Բիւզանդիոս, — Մատթէոսեան ընտանիքը Պոլսոյ հայ համայնքին մէջ ամէնէն պատուաւոր և յարգելի ընտանիքներէն մէկը նկատուած է, եւ իր այս սուգին մասնակցեցան Հայեր ու Հայ Բողոք

քականներ անխտիր, եկեղեցական ու աշխարհական, գործի մարդեր ու գրչի մարդեր, շրջապատելով իր դազաղը Աւետարանականաց Ֆէրիգիւղի մատրան մէջ, չորեքշաբթի իրիկուն, յուղարկաւորութեան պահուն:

Այդ տխուր արարողութիւնը, որուն կը նախագահէր Վերապատուելի Շմաւոնեան, համակիր ցաւակցութեան ընդհանուր արտայայտութիւն մը եղաւ: Հոն էին Բողոքականաց Վսեմ. Ազգապետը, մեր Ս. Պատրիարք Հօր կողմէ՝ Տ. Եգնիկ վրդ. Պապան, Տ. Մկրեան Հայրը՝ իրրև վաղեմի բարեկամ հանգուցելոյն, պաշտօնական անձնաւորութիւններ, Պայպ Նուցի Ամբրիկոսի պետերը՝ Մր. Պօէն, Մր. Կրին, Մր. Պարնմ, վաճառականներ, բժիշկներ, փաստարաններ, գրագէտներ, հրապարակագիրներ եւ ամէն դասակարգի յուղարկաւորներ:

Սրտայոյզ դամբանականներ խօսուեցան՝ մեռելական տխրանուագ երգերու ընդմիջմամբ եւ սրբեցեալ Յակոբ Էֆ. ի մարմինն ամփոփուեցաւ մատրան կից գերեզմանատան մէջ, իր ընտանեկան դամբարանը մէջ:

Մեր անկեղծ ցաւակցութիւնները կը յայտնենք, այս տխուր առթիւ, Վահան Էֆ. Մատթէոսեանի եւ իր վշտահար Գոյրերուն:

Մեր ողբացեալ Հօր

#### ՎՍԵՄ. ՅԱԿՈԲ ԷՖ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆԻ

հիւանդութեան եւ մահուան առթիւ Ամեն. Ս. Պատրիարք Հօր, Վսեմ. Ազգապետ Էֆէնտիի, հոգեւոր պաշտօնէից եւ ամէն բարեկամներու կողմէ անձամբ թէ գրութեամբ արտայայտուած համակրական զգացմանց եւ ցաւակցութեանց համար մեր խորին շնորհակալութիւնները կը յայտնենք:

ՎԱՀՆԵ ՄԱՏԹԷՈՍԵԱՆ  
ԱԶՆԻՒ ՄԱՏԹԷՈՍԵԱՆ  
ՏԷՐ ԵՒ ՏԵԿԵՆ Ս. ՅՐԴՈՒԹԻՒՆԵԱՆ  
ՈՒՊԳՊԻ ՄԱՏԹԷՈՍԵԱՆ  
ԱՆՈՅՇ ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

Ի. Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ ԷՖ. Է ստացանք, վերջին պահուն, գեղեցիկ յօղուած մը, — ո՛չ կօնքուռեան գրավէճին վրայ, — զոր պիտի հրատարակենք յաջորդ թիւով:

# ԱՆԿՈՒՏԻՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

## ՆՄՈՅՇ ՄԸ ԱՆԳԼԻԱԿՈՆ ՀՄՈՒՐԻ

Ճիրոմ ձիրոմ՝ անգլիացի երգիծաբանը՝ ծնած է 1859ին. յաջորդաբար զանազան ասպարէզներ ընդգրկելով՝ եղած է վաճառատան գրագիր, պարոցի վարիչ, սղագրող, լրագրի, դերասան, և վերջապէս օրագրող։ 1892ին, Բօպրոգ Պարի ընկերակցութեամբ հրատարակած է *Idler*ը. իսկ 1893ին շաբաթաթերթ մը, - *To day*: Հեղինակած է զանազան գործեր և քանի մը յաջող կատակերգութիւններ։

Մասիսի անգլիագէտ աշխատակից մը, ձիրոմ ձիրոմի գրուածքներէն թարգմանաբար մեզ կը զրկէ սոյն հատուածը՝ «Անկուտիութեան վրայ»՝ իբրև նմոյշ մը անգլիական երգիծաբանութեան։

Խլիստ նշանակելի բան մըն է որ, որովհետև ինքնատիպ բան մը գրելու հաստատ մտադրութեամբ գրասեղանիս առջեւ անցայ, բայց երբեք սրամիտ և ինքնատիպ բան մը միտքս չիյնար, գէթ այս պահուս, միակ բանը որուն վրայ կընամ խորհիլ հիմակ, անկուտիութիւնն է. կ'ենթադրեմ որ ձեռքերս գրպանս դրած ըլլալս է որ ինծի այսպէս խորհիլ կուտայ. ես միշտ ձեռքերս գրպանած կը նստիմ, բաց ի երբ քոյրերուս, ընտանորդիներուս և մօրաքոյրերուս հետ գտնուիմ. այնքան տաղտկալի ընդդիմութիւն մը ցոյց կուտան—ինչորոյս վրայ այնքան ճարտարօրէն կը պատճառաբանեն, պիտի ըսէի—որ կը ստիպուիմ հաւանիլ և զանոնք դուրս հանել—ձեռքերս, ըսել կուզեմ, իրենց առարկութեան յանկերզը սա է թէ ձեռքերը գրպանը դնել ճէնդլմէնի մը չի վայելեր, բայց գետիւն անցնիմ եթէ կը հասկնամ թէ ինչո՞ւ. կը հասկնամ որ ճէնդլմէնի մը վայելուչ չէ ձեռքերը ուրիշին գրպանին մէջ դնել—մասնաւոր եթէ ներկաներ ալ կան—բայց ո՞վ դուք, ինչպէս կ'երեւային համար կուռլատող-

ներ, ըսէ՛ք տեսնեմ, ի՞նչպէս մարդ մը ձեռքերը ինք իր գրպանը դնելով նուազ ճէնդլմէն կ'ըլլայ. բայց թերեւս իրաւունք ունիք. հիմակ միտքս կ'իյնայ որ ոմանք կատաղօրէն կը մուտային երբ այդ բանը տեսնէին, բայց անոնք մեծ մտամբ ծերունիներ էին. մենք, երիտասարդներս, կանոն է որ երբեք հանգիստ չենք ըլլար առանց ձեռքերնիս գրպաննիս դնելու, երկչոտ և յեղեղուկ կ'ըլլանք. բայց անգամ մը որ ձեռքերնիս մեր տափատին գրպանը դնենք, և ալ կողմը քիչ մը մանրուք դրամ՝ իսկ ձախին մէջ ալ բանալիի տրձակ մը ունենանք, վայրկեանի մը համար երջանիկ կը նկատենք ինքզինքնիս։

Ի՞նչ մը դժուար է գիտնալ թէ ի՞նչ պէտք է ընել ձեռքերով, նոյն իսկ գրպանին մէջ, եթէ ուրիշ բան չգտնուի հոն. տարիներ առաջ, երբ ամբողջ դրամագլուխս մէկ շիլինէ չը բաղկանար, անփութօրէն անոր մէկ բէնիս կը ծախսէի, պարզապէս մանրուք դրամներով գրպանս հնչեցնելու սիրոյն համար. ապահովաբար այնքան անկուտի չես զգար ինքզինքդ, երբ 11 բէնս ունենաս գրպանիդ մէջ քան երբ մէկ շիլին. եթէ երբեք մէկ բէննի գտնուէր քովս, անպատճառ երկու տասնոցի պիտի վերածէի։ Անկուտիութեան վրայ հեղինակութեամբ կընամ խօսիլ, որովհետև... գաւառի մէջ դերասանութիւն ըրած եմ. եթէ ուրիշ ապացոյց ուզուի, ինչ որ հաւանական չեմ գտներ, կընամ աւելցնել թէ «Մամուլին հետ գործ ունեցող ճէնդլմէն մը եղած եմ, շաբաթը 15 շիլինով ապրած եմ, շաբաթ մը նոյն իսկ 10 շիլինով անցուցած եմ... մնացեալ հինգը կախելով, և 15 օր ալ վերարկուով մը ապրած եմ»։

Զարմանալի՛ բան, առտնին անտեսութեան ի՞նչ կատարեալ գիտակցութիւն մը կուտայ ճշմարիտ անկուտիութիւնը. եթէ կուզես դրամին յարզը գիտնալ, շաբաթը 15 շիլինով ապրէ և տե՛ս թէ հագուստի և զօրօսանքի համար ի՞նչ կընաս... աւելցնել, Պիտի հասկնաս թէ կ'արժէ հինգ փարանոցին ետեւէն քար նետել, պիտի հասկնաս թէ կ'արժէ մղոն մը փապանակ ուխտի երթալ

30 փարայ շահելու համար, թէ գաւաթ մը գարեջուրը պերճանք մըն է զոր քիչ անգամ գործածելու է, և թէ օձիք մը կարելի է գործածել չորս... շաբաթ:

Փորձէ ասիկա՝ դեռ չամուսնացած, հիանալի՝ վարժութիւն մը պիտի ըլլայ. աղուդ ալ փորձել տուր գօլէճ խրկելէ առաջ. կան անանկներ որոնց համար այս վարժութիւնը աշխարհ մը լեցուն բարիք պիտի բերէր: Գիտէ՞ք այն փափուկ ծաղիկը որ 94 է վար գինի չի խմեր, և որ կարծես կատուի միս կուտէ ոչխարի խորովոյք մը կերած պահուն. երբեմն դիմացնիդ կ'ելլեն այս կարգի թըշուառականներ, թէ և, բարեբախտաբար մարդկութեան համար, անոնք զլիսաւորաբար սահմանափակուած են այն ահուդի և զարմանալի աշխարհին մէջ՝ որ կին վիպագիրներուն միայն ծանօթ է: Երբեք չեմ լսած որ այս արարածներէն մէկը ճաշացուցակ մը քննադատէ. բայց կատաղի փափաք մը կը զգամ զայն քաշել տանելու Արեւմտեան Ծայրի ըմպելարաններէն մէկը և կոկորդնի ի վար թխելու 6 բէնսնոց ճաշ մը.—

- Պիֆթէք, փուտինկ 4 բէնս
  - Փաթաթէս 1 բէնսի
  - 1/2 լիտր գարեջուր 1 բէնսի
- 
- Համագումար 6 բէնս

Այդ բանին վայելումը (և անոր հետ խառնուած գարեջուրի, ծխախոտի և խորոված երչիկի բոյրը շատ վառ սպաւորութիւն մը կը թողու ընդհանրապէս) կրնար զինքը դրել որ ապագային քիչ մը նուազ յաճախակի քիթ ու պոչ ընէր իր առջևը դրուած որ և է ուտելիքի համար:

Յետոյ ուրիշ առասաճեան դասակարգ մը կայ. «կատողներու դասակարգը որ այնքան հանդարտ կը մօխէ ունեցած մասնութիւնը դրամը, բայց երբեք չի մտածեր պարտքը վճարել. այդ բանը կրնոր նոյնիսկ անոնց սորվեցնել քիչ մը առողջ դատում:

«Ես միշտ սպասուորին չիլին մը կուտամ. մարդ ստակ պակաս չի կրնար տալ, գիտես» կ'ըսէր երիտասարդ գրադիր մը որուն հետ միտարի կը ճաշէի անցեալ օր Րիճընթ Սթրիթի:

մէջ: Իրեն համամիտ գանուեցայ 11 1/2 բէնս իսկ վճարելու բացարձակ անկարելիութեան վրայ. բայց միեւնոյն ատեն, որոշեցի որ մը գինքը ծուղակի դնել ֆըվընդ Կարտընի ճաշարանի մը մէջ ուր սպասուորը, իր պարօտաւորութիւնները լաւագոյն կերպով կատարելու համար, շապիկին թեզանիքներովը գործը կը տեսնէ (եւ ի՞նչ մաքուր թեզանիքներ), ես այդ կառուօնը կը ճանչնամ, եթէ բարեկամս 1 բէնսիէն աւելի որ եւ է դրամ տայ, մարդուկը անպատճառ այն պահուն ձեռքը թոթուել պիտի ուզէ, իրեւ նշան... յարգանքի. այս բանին վստահ եմ:

Անկուտիութեան վրայ շատ մը զուարճալի բաներ ըսուած եւ գրուած են, բայց այդ բոլորին հետ մէկտեղ իրականութիւնը շատ զուարճալի չէ. զուարճալի բան չէ բէնի մը համար երկար բարակ ծնօտ ծեծելու ստիպուած ըլլալ, շատ զուարճալի բան ըլլալու չէ ստրուկ եւ կծծի կարծուիլն ալ, զուարճալի բան չէ նաեւ ցնցոտիներ հագնիլ եւ ինք իր հասցէէն ամչնալ: Չէ՛, աղքատութեան մէջ ոչինչ կայ զուարճալի—աղքատին համար, զգայուն մարդու մը համար աշխարհի վրայ դժոխք է անիկա:

Նոյն ինքն նեղութիւնները չեն որ անտանելի են: Ո՞վ մտքէն պիտի անցընէր սաչափ մը բանի տեղ դնել եթէ ամէնը ատեղած ըլլար. Ռօպէնսօնի հօգն էր թէ տափաթին վրայ կարկտան մը կար, (չեմ յիշեր թէ տափաթ կը հագնէր), կամ թէ ոտքին մատները կօշիկներէն դուրս կ'արշաւէին, կամ կը խորհէր թէ իր հովանոցը բամբակէ չէր, հէրիք է որ անձրեւէ զերծ պահէր իր մարմինը. իր ցնցոտիները անհանդիստ չեն ընել զինքը, որովհետեւ վրան խնդացող «բարեկամներ» չունէր շուրջը:

Աղքատ ըլլալը աննշան բան մըն է. խայթողը՝ աղքատ զիտցուիլն է. ցուրտէն չէ ընդհանրապէս որ առանց վերարկուի մէկը փութապիւնդ տուն կը վազէ. սուտ խօսելու ամօթէն չէ որ կը կարմրի այդ մարդը (սուտ մը՝ որուն չհաւատալը ինք ալ գիտէ) երբ կ'ըսէ թէ ինքը վերարկուները վատառողջ կը դնէ եւ թէ կ'զրուներով է որ հովանոց

չի գործածեր. բաւական դիւրին է ըսել թէ շունեւորութիւնը ոճիր մը չէ, ո՛չ, եթէ այդպէս ըլլար՝ մարդիկ պիտի չամչնային եւ սակայն յանցանք մըն է աղքատութիւնը՝ եւ իբրեւ այն կը պատուի. կարօտ մարդ մը ամբողջ աշխարհիս վրայ կ'արհամարհուի, նոյնքան աղքատի մը որքան լորտի մը կողմէ, նոյնքան սեղանաւորի մը որքան ծառայի մը կողմէ, եւ մեղանարիժ պատանեկութեան համար շինուած բոլոր դպրոցական տետրակներու առակները պիտի չկրնան զայն յարգելի ընծայել: Երեւոյթները ամէն ինչ են, մարդոց կարծիքին նայելով. եւ անիկա որ ամէնէն հուշակաւոր ստահակին հետ թեւ թեւի կը պտտի—հէրիք է որ լաւ հագուած ըլլայ—անպատճառ քովտի փողոց մը պիտի սպրդի երկու խօսք ընելու համար խեղճուկ երեւոյթով ձէնդըլմէնի մը, եւ խեղճուկ երեւոյթով ձէնդըլմէնը որ եւ է մէկէն աւելի լաւ գիտէ այս բանը ու մղոն մը ճամբայ կը չըլի ծանօթի մը հանդիպելէ խուսափելու համար: Անոնք որ զինքը կը ճանչնային իր աղէկ օրերուն, պէտք չունին երբեք ինքզինքնին անհանգիստ ընելու և ուրիշ ճամբայ մը ձեռք առնելու. անիկա իրենցմէ հազար անգամ աւելի փափաքող է որ զինքը չտեսնեն. գալով իրենց օգնութեան, ոչ մէկ բան անոր չափ կ'ատէ. իր բոլոր ուղածը մոռցուիլն է և այս մասին բաւական բախտաւոր է՝ որովհետեւ փափաքին կը հասնի:

Մարդ անկուտիութեան կը վարժուի, ինչպէս մարդ կը վարժուի ամէն ուրիշ բանի, օգնութեամբն այն նմանաբոյժ բժիշկին՝ որ ժամանակ կը կոչուի: Մէկ նայուածքով կրնաս ըսել նորավարժին և հին ձեռքի մը միջև եղած տարբերութիւնը—տարիներով դիրք փոխելու և պայքարելու վարժուած մարդուն և սկսնակին միջև՝ որ կը ջանայ իր թշուառութիւնը ծածկել, տեւական տագնապի մը մէջէ յայտնուելու վախէ. այս տարբերութիւնը պայծառօրէն ցոյց տուող ոչինչ կայ քան իւրաքանչիւրին իր ժամացոյցը գրաւ գնելու կերպը: Ինչպէս տեղ մը բանաստեղծը կ'ըսէ «գրաւի դնելու պահուն

մարդուն ունեցած իրական հանգստասրտութիւնը ոչ թէ Բաղդէն՝ այլ ճարտարութեանն է»: Մէկը գրաւառուին կ'երթայ նոյնքան կամ թերեւ աւելի պաղարիւնով որչափ իր դերձակին. պաշտօնեան նոյնիսկ քաղաքավար է և անմիջապէս անոր հրամանները կը կատարէ, բարկացնելով յաջորդ խուցին մէջ գանուող տիկին մը՝ որ դիտել կուտայ հեզնօրէն թէ իր սպասելը հոգ չէ, եթէ պարոնը կանոնաւոր յաճախորդ մըն է. բայց ինչ դժուարին գործ մըն է մարդու մը առջին քայլը. վաճառատան դուրսի կողմը կը դեզերի նախ, մինչև որ բոլոր թափառաչըրջիկներուն ուշադրութիւնը գրաւէ. վերջապէս, ապակեփեղկերու պարունակութիւնը լաւ մը զննելէ վերջ—զննութիւն մը՝ որ իր շուրջիներուն կարծեցնելու համար է թէ աղամանդէ ապարանջան մը կամ ուրիշ նմանօրինակ աննչան առարկայ մը գնելու նպատակ ունի,—վերջապէս, ներս կը մտնէ անփոյթ քալուածքով մը և ինքն իրեն բարձր դասու անդամի մը երեւոյթը տալով, ներսը բոլորովին անլսելի ձայնով մը կը խօսի, այնպէս որ ըսածը կրկնելու կը ստիպուի եւ երբ, իր ցատքառն խօսակցութեան մէջ «բարեկամ» մը բառին կը յաջորդէ «փոխ տալ», անմիջապէս կ'ըսեն իրեն որ փողոցին ծայրը անկիւնի երկրորդ խանութը դիմէ. ասոր վրայ խանութէն դուրս կ'ելլէ անանկ դէմքով մը որմէ դիւրութեամբ սիկանոք վառել պիտի կրնայիր, և այն տպաւորութեան տակ թէ շուրջի մարդիկը բոլորը զինքը կը դիտեն. երբոր նշանակուած տեղը կը հասնի, անունը և հասցէն մ'աշած է արդէն և ապուշ անյուսութեան մը մէջ կը գտնուի: Երբ լրջօրէն կը հարցուի իրեն թէ ինչպէս ձեռք ձգեց «ատիկա», կը թոթովէ և ինքզինքին կը հակասէ և հրաշք մըն է եթէ երբեք չխոստովանի՝ թէ նոյն իսկ այդ օրը գողցած է, որուն վրայ իրեն կ'ըսուի թէ այդ կարգի գործ մը չեն կրնար ընել, և աղէկ կ'ընէր եթէ կարելի եղածին չափ շուտով հեռանար. ինչ որ կ'ընէ, ոչինչ յիշելով մինչև որ ինքզինքը երեք մղոն հեռացած գտնէ, առանց սաչափ մը գիտնալու թէ ինչպէս հոն հասած է:

Ի՞նչ տաղտկալի բան է ժամը հասկնալու համար կապելաններու կամ եկեղեցիներու ժամացոյցներէն կախում ունենալ. առաջինները շատ առաջ կ'անցնին, իսկ վերջինները ետ կը մնան. ասկէ զատ, կապելայի մը ժամացոյցը դուրսէն դիտելու քու ջանքերդ մեծ դժուարութիւններու կը բախին. եթէ դուռը կամացուկ մը բանաս և ներս նայիս, սպասարկուին արհամարհոտ նայուածքներուն ենթակայ կ'ըլլաս որ քեզ անմիջապէս քսակահատի կամ դրամ թռցնողի տեղ կը դնէ. նաև ամուսնացած յաճախողներու մասին մէջ յուզում մը առաջ կը բերես. ժամացոյցն ալ չես տեսներ, որովհետև դուռին ետին է, և մեղմօրէն ետ քաշուիլ ջանացած պահառդ գլուխդ գրան մէջտեղ կը մնայ, միակ ուրիշ միջոցն է պատուհանին դուրսի կողմէն վեր վար ցատքտել. այս վերջին արարքէն վերջ եթէ երբեք պոռնօ մը չհանես և երգել չսկսիս, շուրջդ բոլորուող դրացի երիտասարդները յուսախաբ կ'ըլլան:

Կ'ուզէք նաև հասկնալ, թէ բնութեան ի՞նչ զարմանալի օրէնքով է որ, ժամացոյցդ «նորոգելու» տալէդ դեռ կէս ժամ չանցած անպատճառ մէկը քեզ փողոցին մէջ կը կեցնէ և նշանակալից կերպով մը ժամը քանին ըլլալը կը հարցնէ. ոչ ոք ամենադոյզն հետաքրքրութիւնը կունենայ քեզի ժամանակը հարցնելու, երբոր ժամացոյցդ գրպանդ ըլլայ:

Սիրելի ծերուկ պարոններ և տիկիներ, որոնք անկուտիութեան մասին ոչինչ զիտեն — և Աստուած տայ որ բնաւ ալ չզիտնան այդ բարի ալեծաղիկ գլուխները — գրաւատունը կը նկատեն ստորնութեան յետին աստիճանը. բայց անոնք որ աւելի լաւատեղեակ են — ինչ որ ընթերցողներս իրենք ալ անտարակոյս դիտած են — յաճախ կը զարմանան՝ հոն առանելով իրենց չյուսացած այնքան մարդիկ. իմ մասիս, ես այդ բանը բարեկամները «կախել» էն լաւագոյն և անկախ կը սեպեմ, և միշտ կը ջանամ այս բանը հասկըցնել այն բարեկամներուս՝ որոնք միտում ունին « $\frac{1}{2}$  — 2 ոսկիի պէտք ունենալու մինչև վաղը մի ս որ»։ Բայց անոնք ամէնն ալ չեն

տեսներ այս բանը. անոնցմէ մէկը անգամ մը դիտել տուաւ թէ այդ սկզբունքը իրեն համար խնդրական էր. կ'ենթադրեմ որ եթէ ըսէր թէ տոկոսն էր իրեն համար խնդրական, աւելի մօտեցած պիտի ըլլար ճշմարտութեան. հարիւրին քսանըհինգ, ապահովարար ծանր կուգայ:

Անկուտիութեան աստիճաններ կան. ամէնքս ալ անկուտի ենք, աւելի կամ պակաս — շատերը աւելի. ոմանք 1000 ոսկիի պէտք ունին, ուրիշներ շիլինի մը. ճիշդ այս պահուս ես ինքս 5 շիլինի պէտք ունիմ, սոսկ 1—2 օրուան համար, շատ շատ շաբաթէ մը կը վճարեմ, և եթէ իմ ընթերցողներէս լէտի մը կամ ձէնդլմէն մը հաճէր փոխ տալ այդ գումարը, իրաւ որ չափազանց շնորհակալ պիտի ըլլայի, կրնաք դրամը ինծի զրկել պահարանով օրտ և թիւրը հասցէին. մինակ թէ այդ պարագային հաճեցէք պահարանը լաւ մը կնքել. իբրեւ գրաւ... պարտագիրս պիտի տամ:

ԳՐԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Գործնական պէտքի մը համապատասխանող հատորիկ մըն է Չ. Տ. Ս. Փափագեան էֆ.ի հրատարակած ՉՈՐԵՔԼԵՉՈՒԵԱՆ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ, հայ., գաղղ., անգլ. գերմ. լեզուներով: Գործը բաժնուած է երկու մասի, Ա. բառարան եւ Բ. խօսակցութիւն: Եւրոպական այդ երեք լեզուներուն վրայ տարրական ծանօթութիւն ունեցող որեւէ Հայ մեծ դիւրութեամբ պիտի օգտուի անկէ, իրեն պէտք եղած բառը կամ խօսքը իր բնիկ լեզուով գտնելով՝ հանդիպակաց սիւնակին մէջ կարդալ ֆրանսերէնը, անգլիերէնը կամ գերմաներէնը: Դասաւորումները խնամով կատարուած են, ընթերցողին դիւրութիւն ընծայելու համար իր ըսելիքը խօսակցին հաղորդելու: Գիրքին կցուած են կարգ մը գնահատական նամակներ ձեռնհաս անձնաւորութիւններէ որոնց կարծիքը հարցուցած էր երկասիրողը՝ իր այս մէթոտի մասին:

### ԲԺՇԿԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

ԻՆՉՊԷՍ ՊԱՇՏՊԱՆԵԼՈՒ ԵՆՔ ԱԿԱՆՋՆԻՍ

Գ. — Առուլջ ականջի պատեպանուժք .

Չպիտի խօսիմ ընա՛ւ այն արտաքին պատահարներուն վրայ, որոնք ուղղակի ականջը կամ վրանը կը վտանգեն, զի ընթերցողները արգէն այս պարագան շատ լաւ գիտեն :

Միայն սա՛ կէտը յիշեմ թէ, ամէն ինչ որ լսելեաց խողովակը կամ անոր ներքնակողմը պատող հոչաթաղանթը կը գրգռէ, հիւանդութիւն առաջ կը բերէ և շատ իրաւամբ : Օրինակի համար, տեւական քերուժուքի ժամանակ պէտք չէ երբեք ականջը կարծր մարմիններով խառնել, խառնչտկել : Այսպիսի առիթներու մէջ, ուր շատ անգամներ մորթի տեսակ տեսակ հիւանդութիւններ ալ առաջ կուգան, էկզէմայի պէս, որքենի պէս, դալայի պէս հիւանդութիւններ, հետագայ դեղը գործածել, բժիշկի խորհուրդ հարցնելէ վերջ անշուշտ, իր օգտակար ազդեցութիւնները կ'ունենայ :

Թէ՛ ինչպէս գործադրելու է, — այս մասին քիչ մը ծանօթութիւն տամ .

Հիւանդին գլուխը առողջ ականջին կողմը ծռել տալէ վերջ, միւս ականջին լսելեաց խողովակին մէջ հետագայ լուծոյթէն լեցնելու է մինչև բերանը և հականեխական բամպակով մը գոցելու է բերանը . այսպէս հիւանդը նոյն լուծոյթը մինչև յաջորդ առտու ականջին մէջ պահելու է . աւելորդ է ըսել թէ քերուժուքը կ'անցնի և էկզէմա կամ ուրիշ ո և իցէ հիւանդութիւն մը եթէ ծայր տալ սկսած է, ան ալ կը մարի :

Ահաւասիկ գործածուելիք լուծոյթներէն քանի մը հատ .

Coaltar saponisé(\*) 1 gr .

Huile de vaseline 30 gr .

կամ

(\*) Coaltar saponisé Le Beuf կը յանձնարարեմ ընթերցողներուն, զի թէ՛ աւելի մաքուր և թէ՛ աւելի հականեխական յատկութիւն մը ունի :

Iodol 9 gr .

Huile de vaseline 30 gr .

Եթէ ականջին մէջ պալար գոյանայ, սաստիկ ցաւ ալ առաջ գալ կըսկսի որուն միակ դարմանը, ուղղակի բժիշկի դիմելով նշդրակով մը ճեղքել տալն է : Իբրև նախագուշական միջոց, վրանի շուրջը տաք ջուրի մէջ թաթախուած լաթերով պատել կը յանձնարարուի միայն :

Լսելեաց խողովակին մէջ օտար մարմիններ : — Լսելեաց խողովակին մէջ կրնան շատ տեսակ մարմիններ գտնուիլ, կոճակէն սկսեալ մինչև աւազի հատիկներ, միջատներ, լուրիայի հատիկ, ևլն . ևլն . որոնք ջրային տաք նապնեք առաջ բերելէն զատ, խուլութեան ալ պատճառ կ'ըլլան անուղակի կերպով :

Լսելեաց խողովակի մէջ գտնուող ո և իցէ օտար աւարկայ մը, պէտք չէ պղտիկ ունելիով, վարսակալով կամ ուրիշ ո և իցէ գործիքով մը հանելու աշխատիլ, ըստ որում այսպէսով փոխանակ դուրս հանելու՝ աւելի ներս երթալու պատճառ կ'ըլլուի : Ամէնէն յարմար և լաւագոյն միջոցը գաղջ ջուրի ներարկումն է :

Եթէ այդ օտար մարմինը ջուրէն ուսնալիք մարմին մըն է, ինչպէս օրինակի համար լուրիայի հատիկի պէս, այն ատեն ջուրին մէջ քիչ մըն ալ ալքոլ կամ կլիսէրին դնելու է : Գործածուելիք գրեխը երկաթէ ըլլալու չէ, փոքրիկ ալ ըլլալու չէ, այլ խոշորիկ և ապակիէ : Երբ ջուրը ներս խուժէ, բնականապէս հոն գտնուող օտար մարմինը չի կրնալ գլխաւորով ջուրին ուժգին հոսանքին, դուրս պիտի ելլայ : Ականջին տակը կոնգ մը դնել շատ յարմար է :

Այս մէթոտով շատ անգամներ յաջողած եմ տղոց ականջէն օտար մարմիններ հանելու : Գիշտից խցանի պարագային մէջ ալ նոյնը ի գործ դնելու է . բայց կէտ մը կայ հոս կարեւոր և նկատի առնելիք . Ականջի մէջ դեռ ջուրով չի ներարկած, երկու երեք օր առաջուրնէ, ամէն իրիկուն պառկած ատենը հետեւեալ լուծոյթէն քանի մը կաթիլ կաթեցնելու է .

Carbonate de soude 1 gr.

Glycerine 15 gr.

Eau pure 15 gr.

Ականջի մէջ գիւլային խցանի գոյութիւնը հաստատել այնչափ դիւրին գործ մը չի կարծուի: Մասնագէտ բժիշկի մը դիմելու է, զի ան է միայն որ կրնայ հաստատել այդպարագան և առաջը առնել խուլութեան որ այնքան նեղութիւն և տանջանք կը պատճառէ ենթակային:

\* \*

Եւստաքեան խողովակի միջոցաւ ալ առողջ ականջը կրնայ վտանգուիլ:

Ինչպէս նախորդ քրոնիկներու(\*) մէջ ալ ըսած էի, քթի կարգ մը հիւանդութիւններ, տեւական կամ սուր քթատապեր են. ամէնքն ալ կրնան ականջը վտանգել, բայց գլխաւորաբար երկու կերպով: Կամ քթային խոցումի հետեւանքով և կամ խնկինքի միջոցաւ: Այս վերջինը կրնայ եւստաքեան խողովակի միջնորդութեամբ մինչև ականջ երթալ, երբ անուշադրութեան հետեւանքով մարդ խնջած ատեն բերանը ամրապէս գոց պահած ըլլայ:

Քթային խցումի առաջը առնելու համար անպատճառ բժիշկի մը դիմելու է: Քթային հոչաթաղանթի գերաճումէն բօլբոլի (սխարաթ) ներկայութենէ և կամ վիժեթաօսիօս ակնօսիք ըսուած պղտիկ ուռերու գոյութենէն առաջ եկող քթային խցումը միայն բժիշկը կրնայ հաստատել և բուժել: Այսպիսի առիթներու մէջ ուրեմն բժիշկի մը դիմել հարկ անհրաժեշտ է, զի վաղ կամ անազան ականջի խուլութիւն մը կրնայ առաջ գալ և քթէ առաջ եկած ալ է. անոնց բուժումովը, ականջն իր խողովակնը կը վեղջատանայ՝ մեծ ուրախութեան մէջ թողով թէ ենթական և թէ շուրջինները:

Երբ մէկը իր քթէն ո և իցէ անհանգըստութիւն մը կը զգայ, բժիշկի մը չի դիմած կամ եթէ անոր դիմելու միտք չունի, պարզ չուրով լոգանքներ ընելու է: Վէպրի սիօնօնը առ այս շատ յարմար է և իմ յարգելի ուսուցիչս Բրօք. Շէֆիք փաշա, միշտ այս մէթոտը կը յանձնարարէր աղքատ հիւանդաց որոնք քիչ շատ կ'օգտուէին:

Քթի այս լոգանքը էնֆլուէնցայի, կարմրախտի, հարսանիքի և հազագաբորբու մի ատեն ալ ի գործ դնելու է, զի ականջի մէջ առաջ գալիք այտուց կամ պալարներուն առաջը կ'առնէ քիչ շատ:

Բայց ինչպէս ամէն բան, այս ալ իր անպատեհութիւնները ունի: Քթի մէջ զըսունուող կեղեւներէն հատիկ մը, կամ խնկինքի պղտիկ մաս մը երբեմն անուշադրութեան հետեւանքով շուրին հոսանքէն դէպ ի Եւստաքեան խողովակ կ'երթայ, փոխանակ բուժուելու՝ ալ աւելի գէշ կացութեան մը կ'ենթարկուի հիւանդը: Այս պատճառաւ պարզ բան մըն է ըսելով գործադրելու սկսելու չէ: Բժիշկի երթալու է և ան լոգանքը ընելու է, եթէ իրապէս օգուտ մը կ'ուզուի կամ կըսպասուի: Քթային շնչառութեան միջոցաւ ալ (inspiration nasale) քաղջ շուր կրնանք քթերնիս քաշել, բայց այնքան կարեւոր ազդեցութիւններ չընէր ան, և ճիշդ այս պատճառաւ Տօքթ. Տիւրլէյ այս մէթոտը կը պախարակէ, ինչպէս շատ իրաւամբ կը ձայնակցի նաև Տօքթ. Հանրի Մէնտու:

Առողջ ականջը կրնայ վտանգուիլ նաև ուղղակի մարդկային գործարանաւորութեանէն: Արեան ապականութիւն, սակաւարիւնութիւն, ալքոլամոլութիւն, արբեցութիւն, ծխամոլութիւն, ասոնք ալ քիչ շատ կրնան վտանգել ականջը: Մեր սիրելի Պարտիզակցի Հայրսուրբը արդէն հրապարակաւ ալ խոստովանեցաւ թէ իր մէկ ականջին խողովակնը ալքոլամոլութեան կորսնցուցած էր: Ահաւասիկ համոզիչ օրինակ մը, որուն վրայ կրնանք աւելցնել նաև ուրիշ կարգ մը իրողութիւններ ալ: Բայց զանց կ'ընեմ, զի գիտեմ թէ ընթերցողները այնքան չ'հետաքրքրեր:

Փրանկախտը, ուռականութիւնը, շաքարախտը, ստամոքսի կարգ մը հիւանդութիւններ, իսթերիս և շղայնականութիւն ալ խուլութիւն առաջ կը բերեն, բայց երբ ժամանակին բժիշկին դիմելով դարմանել տրուի, կրնան բուժուիլ և խուլութեան առաջը առնել:

Տօքթ. Տ. ԱԼԼԱԶԿԵՐՏԻ ՈՐԴԵ

Մթթա

(\*) Մասիս Թ. 4 5

# ՖՐԱՆՍԱՅԷՆ ԴԵՊԻ ՊՐԱԶԻԼԻԱ

(ՏՈՒՔ. ԼԵՌՈՒ ԳԱՐԱՆԻ ՅԵՍԱՏԱԿՆԵՐԸ)

Քամամիւի ծովախորշին մէջ, բազմաթիւ նաւակներու հանդիպեցանք. յորդառատ դալարներ ու բոյսեր կը ծածկէին ծովեզրը և պառոնուհին չէր գիտեր ինչպէ՛ս յայտնել իր զմայլանքը: Ժամ մը նաւարկելէ ետք, ցամաք ելանք, փոքրիկ խափչիկներու երամէ մը չընկալաւ: Մեր առաջնորդը հասկըցուց մեզի թէ պանդուկի մը մէջ պիտի սպասէր մեզի, և Պ. տը կռավալ առաւ տարաւ զմեզ դէպի հիւպատոսարան, որ Քամամիւի միակ փողոցին զառիվայրին գլուխը կը գտնուէր:

Հինգ վայրկեանէ ի վեր մագլցելու վրայ էինք, երբ պառոնը դէպի ինծի դառնալով, հարցաքննողի չեչտով մը ըսաւ.

—Տեսաք, տօքթէօր, որ հոս գալու համար Պահիաի բացերէն անցանք, մէկ մղոնէն պակաս հեռաւորութեամբ:

—Այո, դիտեցի, պատասխանեցի, շատ սիրուն քաղաք մըն է Պահիան, իր ամփիթատրոնածև ըլրակներովը:

—Անշուշտ մեր անյնիլը տեսան, վրայ բերաւ պահ մը ետքը:

—Շատ հաւանաբար, անշուշտ ուշադրութիւն դարձուցին մեզի:

—Կը կարծէ՞ք...

Վայրկեան մը աչքիս մէջ նայեցաւ, բայց այնպէս մը ձեւացուցի թէ չէի անդրադառնար իր հարցափորձին տարօրինակութեանը և ճամբանիս շարունակեցինք, առանց այլևս Պահիաի խօսք ընելու:

Քարուտ չոր գետնի մը վրայէն կը քալէինք, շիշերու կտորուանքներով լեցուն, որոնց մէջ կօշիկներս ճեղքուեցան երկու անգամ: Պառոնուհին անհամբեր երեւոյթ մը ունէր և կըսէր թէ կեանքին մէջ այս տեսակ դողգոթոյթի մը վերելքը չէր կատարած: Ա-

սով հանդերձ, տեսարանին մեծվայելութեանը առջև իր դժգոհութիւնը տեղի տուաւ կամաց կամաց և սկսաւ, մինչև բարձր քաղաքը հասնելնիս, հիացում յայտնել ամէն բանի վրայ և ըսել թէ շատեր պիտի ուզէին սուղ գին վճարել ասանկ անբաղդատելի հրաշալիք մը տեսնելու համար:

Մեր ստորոտը, Քամամիւն կը թաղուէր հասարակածային արեւին ոսկեփոշի ճառագայթներուն մէջ: Խափշիկ տղաքներ մեզի կը հետևէին աղմկալից: Յայտնի էր որ իրենց հետաքրքրութիւնը կը շարժէինք, և երբեմն մեզմէ առաջ կ'անցնէին՝ երթալ իմացնելու համար մեր գալուստը այդ աղքատիկ թաղին խրճիթներու բնակիչներուն, — թաղ մը սակայն որ հոյակապ ու բնաստեղծական երեւոյթ մը կ'առնէր իր լուսաշող բարձրութեանը մէջ: Սեմերուն վրայ, պառաւ կիներ կեցած՝ մեր անցքը կը դիտէին կասկածոտ հետաքրքրութեամբ մը: Մէկ բառով ըսեմ թէ, ցնցող տպաւորութիւն մը առաջ կը բերէինք անոնց վրայ:

Վերջապէս հասանք փերեզակի մը խանութը, ողորմելի չէնք մը, ուր բազմած էր ծեր մարդ մը որ մեզ տեսնելուն պէս փութաց դիմաւորել:

Պառոնը միակ մտահոգութիւն մը ունէր՝ հիւպատոսը տեսնել: Խառնակ լեզուաւ մը, որ ծիծաղելի էր պարզապէս, ջանաց հասկըցնել ձերու կ'խանութպանին թէ ջերմապէս կը փափաքի, իր այցին առթիւ, տեղական իշխանութիւնները ողջունել: Դիպուածը ասկէ լաւագոյն կերպով չէր կրնար օգնութեան հասնիլ մեզ: Ծիշդ դէմ առ դէմ կը գտնուէինք Քամամիւի առաջին պաշտօնատարին հետ, որ յայտնեց մեզի, ի մեծ ցաւ պառոնին, թէ այնտեղ որ և է հիւպատոս

լիկար: Պ. տը կռավալ սմբած մնաց ու մար-  
դուկին կարկառեց շոգեհնաւն իր հետ բերած  
անցադիրը խնդրելով որ ստորագրութիւնը  
դնէ անոր վրայ, վաւերացման պէս բան մը  
կատարելու համար գէթ: Բայց պատկառելի  
փերեղակը մերժեց, առարկելով թէ այս  
տեսակ ձեւակերպութիւն մը աւելորդ էր:

Ճարահատ և յուսահատ՝ պառօնը հարցոց  
թէ նամակատունը ո՞ւր կը գտնուէր: Բայց  
դարձեալ յուսախարութիւն կրեց: Թ՛ղթա-  
տարական շէնքը գոց էր և մինչև յաջորդ-  
օրը սպասելու էր՝ հաղորդակցիլ կարենալու  
համար աշխարհի մնացեալ մասին հետ: Պա-  
ռօնուհին քանի մը գնուեցեր կատարեց փե-  
րեղակէն իբրև շնորհակալութեան արտա-  
յայտութիւն իր ցոյց տուած հաճոյակատա-  
րութեանը համար, եւ տեսակցութիւննիս  
վերջացաւ յոյժ մտերմական եւ սիրալիր  
կերպով: Փերեղակը պատուական գինի մը  
հրամցուց մեզի, մերժելով դրամ առնել:

Սակայն, պղտիկ խափշիկները յամառօրէն  
մեզի կըսպասէին դուրսը, խանութին դուռը.  
անոնցմէ մէկը քաջութիւն ունեցաւ ներս  
մտնելու եւ մտերմութիւնը այնչափ առաջ  
տարաւ որ սկսաւ խաղալ տիկին տը կռա-  
վալի հովանոցին հետ: Միւս տղաքն ալ  
անոր օրինակին հետեւեցան եւ խանութը  
լեցուցին իրենց աղմուկովը եւ... հոտերովը:  
Պառօնուհին հաճոյք կըզգար անոնց մանկա-  
կան համարձակութիւններէն եւ ձեռքը կար-  
կառելով սիրուն մանչուկի մը՝ թողուց որ  
իր վարդազօյն եղունգներուն հետ խաղայ  
ու իր մատանիները համբուրէ: Այդ միջոցին  
տարօրինակ գաղափար մը յղացաւ:

— Պառօն, ըսաւ, ի՞նչ կը մտածէք տես-  
նեմ առաջարկութեանս վրայ: Սա պղտիկը  
նետերնիս տանէինք. շատ սիրուն է ու գրգ-  
ուելի: Ապագային, Բարիզի մէջ, սքանչելի  
մանկուհիկ մը կըլլայ մեզի համար:

Բայց Պ. տը կռավալ բոլորովին գռեհիկ  
բան մը նկատեց այս առաջարկը և խօսակ-  
ցութիւնը կարճ կապելու համար՝ դուրս ե-  
լաւ խանութէն ու լայն ճամբուն կողմը  
գնաց: Իր կինն ալ, շուտ մը հրաժարելով  
այս որդեգրութեան գաղափարէն, ինքզինքը

մխիթարեց՝ լիառատ մանրուք դրամ սփռե-  
լով փողօցին կոպիճներուն վրայ:

Աղնուական ամուրը ժամու մը չափ ալ  
չըջեցաւ Բամամիւի մէջ, որմէ ետք՝ պա-  
ռօնը դերասանական շարժումով մը երկինք  
նայելով ու արեւամուտը ցոյց տալով, հրա-  
ւիրեց զմեզ ամէնքս շոգեհնաւ դառնալու:

\* \* \*

Վերելքը տաժանելի եղած էր. քիչ մնաց  
որ վայրէջքն ալ վտանգաւոր ըլլար: Պա-  
ռօնը եւ պառօնուհին, որոնք թեւ թեւի  
մտած կին, ամէն անգամ կռնակի վրայ գը-  
լորուելու վտանգին կը մատնուէին, կոպիճ-  
ներուն վրայ: Ուզեցի օգնել իրենց, բայց  
պառօնուհին մերժեց իմ հաճոյակատարու-  
թիւնս: Նաուղիղնիս մեզի կըսպասէր նա-  
ւամատոյցին վրայ եւ մակոյկնիս ճամբայ  
ելաւ: Պառօնուհին իր ծունգերուն վրայ կը  
կրէր փոքրիկ ծրար մը հակիթի, սիկառէթի  
եւ գարեջուրի զոր նաւահանգիստի կապե-  
լաներէն մէկէն գնած էր: Պառօնը զուարթ  
երգ մը կը մրմնջէր. ու երկուքը մէկանց  
ժպտուն ու երջանիկ կեանքով մը համակ-  
ուած կերեւային:

Սակայն, քանի կը յառաջանայինք դէպի  
Ովկէանոս եւ քանի մութը կը տարածուէր  
ծովին ու եզերքներուն ընդարձակ տարա-  
ծութեան վրայ, Պ. տը կռավալ իր դուարօ  
թութիւնը կը կորսնցնէր: Դիտեցի որ մա-  
կոյկին յետսակողմը կրցածին չափ կը հարօ  
ցափորձէր մեզ ընկերացող Պլազիլիացին,  
յուսահատ խօսքեր արտասանելով: Ի՞նչ նոր  
քմահաճոյք կը տանջէր զինքը նորէն: Շատ  
չանցած՝ իմացայ: Մեր առջեւ, բաւական  
հեռուն, Քարաբիճան իր ներկայութիւնը կը  
յայտնէր իր վառ լապտերներովը որոնք մութը  
կը ճեղքէին:

Նաուղիղնիս մինչև շոգեհնաւին մէջ ըն-  
կերացաւ մեզի, եւ զարմացմամբ տեսայ որ,  
փոխանակ բաժնուելու, վեր ելաւ սանդու-  
խէն՝ հետեւելու համար պառօնին որուն հետ  
փակուեցաւ անոր խցիկը: Նիւթըն Բօուիս  
նաւեպետը տեսած էր այս օտարականին շո-  
գեհնաւ մտնելը:

(Շարունակելի)



### ԼԱՐԱՏԵՑԻ ՄԲՍԱՌՆԶՆԵՐ

Երբ ինձմէ ուզես սիրտ մը քաղցրաւէտ,  
 Որ լեցուած չըլլայ սիրով մը տարտամ,  
 Որ քեզի համար բարախէ յաւէտ,  
 Ո՛չ միայն սիրաբա, հողի՛ս ալ կուտամ:

Երբ ինձմէ ուզես սէր մը հեշտազին,  
 Որով ես առաջ ըզքեզ սիրեցի,  
 Որով քու մէջըդ հեշտանքներ ծագին,  
 Ո՛չ միայն սէրըս, հաճո՛յքս ալ քեզի:

Երբ ինձմէ ուզես յուշերըս նախկին,  
 Զոր վայելեցինք միատեղ արթուն,  
 Որ մըխիթարէ յաւէտ քու հոգին,  
 Ո՛չ միայն յուշերս, յոյսե՛րս ալ ա՛ն դուն:

Երբ ինձմէ ուզես խոկալ քու վըրադ,  
 Քեզ համար միայն բառեր փըսփըսալ,  
 Գիտցիր թէ կուտամ սիրտիդ անարատ,  
 Ո՛չ միայն խոհերս, ըզգացումներս ալ:

Երբ ինձմէ ուզես իղձըս սըխալի,  
 Իղձ մը քու սիրոյդ համար հեշտալար,  
 Որ սոսկ քու սիրտիդ համար միշտ հալի.  
 Ո՛չ միայն իղձըս, ցանկութիւնս ալ ա՛ն:

Իսկ երբոր ուզես տեղ մը զըրզանուշ,  
 Ուր հոսեցընես արցունքդ հալիչէ,  
 Այդ արցունքովդ վաղանցիկ, անյուշ,  
 Ո՛չ միայն ձակատս, այլ սիրտս ալ օձէ՛ . . . :

ՅԱԿՈԲ ԶՕԼՕԼԵԱՆ

Ս. ԷՉՄԻԱԾՆԷՆ կը հազորդեն թէ Ս. Հայրապետը դարձեալ հիւանդացի է:

ՍԱՆՍԱՐԵԱՆՆ Վարժարանի Խնամակալութիւնը, - ինչպէս կը ծանուցանեն մեր օրաթերթերը՝ «Ա. Հէրըլտ»էն առնելով. — որչա՞ծ է երկու յարկի յաւելում մը ընել Իսմայիլ փաշա խանին վրայ (ի Սիրքէճի) որ նոյն վարժարանին կալուածներէն է: Այս շինութիւնը, որուն ձեռնարկուած է արդէն, վարժարանին հասոյթները աւելցնելու նպատակով, 9000 ոսկիի փոխարէն յանձնուած է Փրանսացի ճարտարագետ Պ. Բէրրինեանի:

ՀԻԻԱՆԴԱՆՈՅԻ Հոգաբարձութիւնը որոշած է՝ կին հիւանդներու յատկացնել Յ. և Մ. Յակոբեան Տեարց կառուցանել տուած բաժինը որ աւարտած է արդէն, ճարտարագետութեամբ Լեւոն Էֆ. Կիւրեղեանի: Նոյն պէս որոշած է՝ ջլախաւորները իրենց արդի մութ, խոնաւ ու վատառողջ նկուղներէն փոխադրել այրերու հին հիւանդանոցին սրահներուն մէջ ուր այդ դժբաղդները պիտի կրնան ապրիլ առողջապահիկ պայմաններու մէջ: Հիւանդանոցի խոհանոցն ալ եւրոպական դրութեամբ օժտելու համար, հարկ եղած կազմածները Եւրոպա յանձնարարուած են:

ԼՈՆՏՈՆԻ մէջ վաճառականութեամբ հաստատուած ազգայիններ, որոնցմէ շատերուն ընտանիքներն ալ իրենց հետ կը գտնուին, տարին մէկ քանի անգամ շրջակայ քաղաքներէ հայ եկեղեցականներ կը հրաւիրեն՝ հոգեւոր պաշտամունք կատարելու համար: Այս անգամ ալ հրաւիրուեր է Եւրոպայի Հայոց առաջնորդ Տ. Գէորգ Եպիսկ. Իւթիւճեան որ նախընթաց շարժուն Մանչէսթըրէ հոն երթալով՝ տեղւոյն Երիցական Եկեղեցոյ պետէն թոյլտուութիւն խնդրեր է արարողութիւն կատարելու իրենց եկեղեցոյն մէջ, և այս առաջարկը ընդունուելով՝ պատարագ մատուցեր և քարոզ խօսեր է:

ՕՐԹԱԳԻԻԴԻ ազգ. երկսեռ վարժարաններու մանկապարտէզի հանդէսը տեղի պիտի ունենայ յառաջիկայ կիրակի, ցերեկուան ժամ 7ին, Ս. Թարգմանչաց վարժարանի սրահին մէջ: Դպրոցական այս սիրուն հանդէսը առիթ պիտի ընծայէ ծնողքներուն և գիւղին կրթասէր ազգայիններուն՝ անձամբ տեսնելու տասն ամսուան շրջանի մը մէջ ձեռք բերուած կրթական արդիւնքը, Թաղ. Խորհուրդի անձնուէր հոգածութեան ու մանկապարտէզի վարիչ Օր. Արմաւենի Փափաղեանի ձեռնհաս աշխատութեանց շնորհիւ:

Հիմնադիր—Կ. Ս. Իիթիիճեան  
 Տէր եւ Տնօրէն—ՏՈՔՔ. ԵՂՈՒԱՐԴ ՄԱՍԻՍ  
 Տպագրութիւն ԱՐՄԻՆԻՎ Օրագրի



# ՆԱԶԱՐԷԹ ԽԱՉԷՐԵԱՆ

Փ Ս Ս Ս Ա Ռ Ս Ն

Պոլիս, Մարբուհնրար, Պարնարան խան  
Թիւ 26

Ամէն կորգի դասեր կը ստանձնէ եւ  
խնդրոյ աւարկայ եղած քործերու համար  
թէ՛ բերանացի եւ թէ՛ թղթակցութեամբ  
բանակցութիւններ կը կատարէ եւ կարծիք  
կը յայտնէ. կը խմբագրէ եւ կը թարգմանէ  
դասերու եւ առեւտրական ու սովորական  
պայմանագրութեանց վերաբերող թուղթեր:  
Ուրբաթ օրերը մինչեւ կէս օր ձրիա-  
բար խորհրդակցութիւն կը կատարէ եւ կար-  
ծիք կը յայտնէ:

Ապահովագրական գործառնութիւններու  
եւ ի մասնաւորի կեանքի ապահովագրական  
ընկերութեանց նկատմամբ անհրաժեշտ եղող  
տեղեկութիւնները ձրիաբար կուտայ:

Կը յանձնարարէ որ մինչեւ որ այս մասին կա,  
բեւար եղած տեղեկութիւնները իրմէ չտառ-  
ուին, ապահովագրութիւն չի ստորագրուի:  
Ապահովագրական վիճարոց հասարակման գու-  
տարներու եւ փոխարժէքներու գանձում-  
ներ կը ստանձնէ: 1-10

## Դ Ե Ր Չ Ա Կ

Վ Ի Չ Է Ն Ա Լ Ա Ճ Ա Ս Ա Ն

Ղալաքիա, Հարանքը փողոց, քիւ 13

Հաւ տեսնի կերպաներով ու ձեւաւոր  
կազուտ պատրաստել, ալ ուղղները, ու-  
րանք միանգամայն սժանութիւն կը փնտը-  
ւեն եւ վճարման դիւրին պայմաններ, կըր-  
նան դիմել այս նոր բացուած խանութիւնը, եւ  
մեծապէս գու պիտի մնան: 1-10

# ԱՌԻԹԷՆ ՕԳՈՒՏ ՔԱՂԵԼ

Վ Ա Ճ Ա Ռ Ա Տ ՈՒ Ն

Հ Է Ր Ճ Ա Յ Ի

ԱՊԱՌԻԿ ԵՒ ԿԱՆԵՒԿ ՎԱՃԱՌՈՒՄ

Հէրձոյի վաճառատունը՝ գուտարեղեններու, սպիւ եւ արծաթ չգթաներու, գրգռի-  
պատի եւ քօնօտի ժամացոյցներու մասնաւոր վաճառատնէն զտա, իր բողձաթիւ յան-  
խորհրդանուն վաճառութիւնէն քաջալերուած՝ այս անգամ կը փութայ յայտարարել թէ ա-  
մէն եղանակի յասուկ վերջին նորաձեւութեան վրայ պատրաստ ւենք արանց, կանանց  
եւ ազայց հոտար ունէն տեսնի կազուտներ ու անձրեւի համա մաւշադա վերաբե-  
ններ, նաեւ ներմակեղեններ, ֆանթէլներ եւ թօսֆիլէներ ու ամերիկեան կօշիկներ: Ունի  
նաեւ կակարատի, ձեղունի լամբաներ, մանկակներ, եւրօպական ու անգլիական գոր-  
գեր, գետնի մաւշադաներ, կրասֆօններ ու պիտիքիլէթներ՝ ամենավերջին կատարելու-  
թիւններով:

Հէրձոյի վաճառատունը իրականապէս ու լայնօրէն շահած է հանրութեան  
վաճառութիւնը եւ գուտնազուծիւնը իր ազանքներուն ազուտութեան եւ սպիկներու  
մաքրութեան, ձեւաւորութեան եւ սժանութեան համար:

Այս ամէնուն արշաւ արժէքին վաճառուին է

ԱՊՊԱՌԱՌԻԱՆ

Միայն թէ գնուած ազանքին կարիւրին 20ը կանխիկ. իսկ մնացեալ գումարին հա-  
մար շարժութեան կարիւրին 5 վճարմամբ պատրաստ է կաթալթիլ:

Վաճառատունն հաստատուած է

ՄԵՄ-ՇՈՒՒԱՅ, ՈՍԿԵՐՉԱՅ ՄԵՄ ՓՈՂՈՑ ԹԻԻ 13


Անգամ մը այցելել բուսական է համազուելու համար թէ՛ Հէրձոյի անկողնի կող-  
մակերպութեամբ մը ի վիճակի է այսօր գուտնի իր ամէնէն դժուարուած լաճախորդները:  
Կանխիկ գնողներու նամար հարիւրին 5 զեղչ:

Սակարկուրիւն չկայ:

Շարժութեան վճարմանց համար հաւաքիկներ մէջ պատրաստ են:



0



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի միայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղաուկի աղբիւր մըն է, Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

# Ս Ի Ն Կ Է Բ

ՀԱՅԹԱՅԹԻԶ ԿԱՅՍ. ՊԱԼԱՏԱՆ

The Singer Manufacturing Cie.

Ձեռքի, սափի ու սափի եւ ձեռքի միանգամայն մեխանաներ կը գտնուին:

մեքենան լաւագոյնն է. սոյն մեքենան ամենէն աւելի կատարելագործուածը, հաստատունը եւ դիւրագործածելին ըլլալուն՝ բովանդակ աշխարհի մէջ՝ ամէն ոք Սինկէրի մեքենաները կը գնէ:

Սինկէրի մեքենաները կը ծախուին միմիայն Սինկէր Ընկերութեան վաճառատանց մէջ՝

ՇԱՐՄԱՎԱՆ  
ՄԱՍՆԱՎՃԱՐՈՒՄՆԵՐ

- |         |   |  |
|---------|---|--|
| ՌԵՐԱ.   | } | 1. Մեծ փողոց, Պօն Մառչէի դէմ, Թ. 343 եւ 343 կրկին՝ |
|         |   | 2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ.            |
| ԿԱԼԱԹԱ. | } | 1. Սինկէր խան, Թիւնէլին ետեւը.                     |
|         |   | 2. Գարաքէոյ, Թրամվէյին կայարանին դէմ.              |
| ՊՈԼԻՍ   | } | 1. Սուլթան Համամ, Թ.                               |
|         |   | 2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, Թ. 13. |
| ՍԿԻՒՏԱՐ |   | Չարըզ Պոյու, Թ. 120.                               |

Դասերը եւ նորոգութիւնք ձեռքի.

Կասաբեալ երաւխաւորութիւն:

Մասնաճիւղեր գաւառաց բոլոր քաղաքներուն մէջ:

Սինկէրի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, Թ. 343 եւ 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւզողլուի տունը: 4—10

## ՏՕԲԹ. Ե. ՄԱՍԻՍ

ԲԵՐԱ ԹԱԳՍԻՄ ՓՈՂՈՑ, ԹԻԻ 12

Ամէն տեսակ ներքին հիւանդութիւններէ գնաց, մտնողիւստը եւ երկար տարիներէ ի վեր կը դարձանէ սպասաբոյ, սղեաց, միզային ճանքաներու հիւանդութիւնները, զգային տկարութիւնները, հին եւ նոր գաղտկան սխտերը: Այս վերջին սխտերը՝ առանց սաստիկ խանգարման եւ նորագոյն մեթոտներով կը բուժէ կարճ միջոցի մէջ:

Հիւանդ կը՛ դունի մտնն օր կէս օրէ վիջը: Զոյեքցորթի օրհիւր միայն ճրքի: 4—10

## ԱԴԱՄ ՎԱՐԴԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Արանց եւ կանոնց ճշտակուսը հոգեւորութեան Պօլիս, Սուլթան—Համամ, Մի. Թիւր Դրամատան դէմ թիւ 58:

Սոյն վաճառատան մէջ գտնուած սպասաբոյները, սրանց ու կանոնց յատուկ հովանոցներ, իրենց գեղեցկութեան կը միացնեն սոսկաւսութիւն, եւ դիւրամտայնի գիւնեալ տանուիւթիւնն ու կ'ընծայեն կատարելութեան:

Սղամ վարդեան մեծապէս զոհ թողուցած է իր բաղձաթիւ յաճախողները: 4—10